

ՄԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մեջ:

Թիֆլիս, Редакция «Мшакъ»,
Tiflis, Rédaction «Mschakъ».
Տէլէֆօն № 253.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խաւարանի մէջ 2 կոպեկով:
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԿԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԵՐ

ԲՈՒՄԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պահանջ դրամաներից.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արձազանքներ. Անբերելութիւնից փնտրվածները օգտին. Նամակ Ախալցխայից. Նամակ Ալեքսանդրապոլից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ԽՈՒՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՆՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ազատ ժամեր.

ՊԱՆՈՒՆ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԻՑ

Մեր հայ դերասանները զարմանքով պետք է լսեն, որ Մոսկովայում, թատրոնական գործողների համառոտական ժողովում հարց է բարձրացված դերասանների կրթական ցենզի, դերասանների բեմական պատրաստութիւնների մասին: Ժողովի մասնակիցների մի նշանաւոր մասը կարծիք է հայտարարում, որ դերասանը ունենալ թէ որոշ ընդհանուր կրթութիւն է թէ բեմական արհեստի մի յայտնի նախապատրաստութիւն:

Այդ հարցը առաջ է եկել գործնական կեանքի մի շարք երևոյթների շնորհիւ: Իր անկրթ լինելու պատճառով դերասանը չէ հասկանում պիէսների բուն իմաստը եւ նրանց մէջ դուրս բերված գործող անձնաւորութիւնների տիպերը. նա չէ կարողանում իրան բարձր պահել հասարակութեան մէջ եւ չը խայտառակել դերասանի անունը եւ կոչումը. նա անընդունակ է վերաբերվում իր արհեստին բարոյական եւ հասարակական տեսակետից եւ միայն մի նպատակ է դնում իր համար՝ շատ փող վաստակել կարճ միջոցում: Վերջապէս նա չէ նպատակում բեմական գործի անելի կարգաւորական զարգացման եւ անընդհատ կատարելագործութեան:

Պարտաւորեց ուցիչ դարձնել դերասանին:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ա.ՂԱՏ ԺԱՄԵՐ

Առախալի ԳՐԱՐԱՐՈՒՄ

«Մշակի» № 36-ում կարդացինք պ. Ս. Տէր-Աւետիքեանի նամակը Գրանշախի «Չաւաւի-չիկոն Եւնիք» խորագրով:

Заявщикъ нѣмцынъ բառ է, որի զուտ հայերէնը մենք չունենք:

Заявщикъ կոչվում է այն անձը, որ եմթարկով թէ տէրուհապատկան այս կամ այն կտոր հողի տակ կայ որ եւ հանք—պղինձ, նաւթ, քարածուխ, արծիւ, ծծումբ, ոսկի եւ այլն—խնդիրք է տալիս պատշաճաւոր իշխանութեան եւ յայտնի ժամանակամիջոցով իրաւունք է ստանալ շահագործել այդ նիւթը: Դրա համար էլ եւ վճարում է կամ մի գումար, կամ յայտնի պրօցենտ՝ պետութեան գանձարանին:

Պատահում է, որ заявщикъ-ը աջողութիւն է ունենում եւ մինչեւ անգամ լաւ հարստութիւն ձեռք բերում: Բնութիւնը դառնում է նրա օրինելի առարկան, նրա իղէալը:

Պատահում է եւ հակառակը. նա ծախսում է մինչեւ վերջին կոպէկը եւ դատարկաձեռն յետ կանգնում՝ անիծելով ամբողջ բնութիւնը եւ նրա դրաւիչ ու խաբէրայ ծոցն ու կուրծքը:

Մինչեւ այսօր այդ գործով պարագում էին տղամարդիկ:

Թողնենք հետո աշխարհները Շրջեցէ Կովկասի տափարակները, սարերն ու ձորերը եւ դուք կը տեսնէք ամեն տեղ փոսեր եւ հորեր, որոնց վրա դիշեր ցերեկ աշխատում են տղամարդիկ, պարզ բան է, հարստութիւն ձեռք բերելու համար:

Այսօր ամենաբաղաւոր կենտրոնը Կովկասում Բաղուն է, որ վերջին 30 տարվայ ընթացքում զարճեց իր վրա ամբողջ երկրագնդի ուշադրութիւնը, գրաւեց դէպի ինքը միլիոնաւոր

սանի համար թէ որոշ ընդհանուր կրթութիւնը եւ թէ մասնագիտական պատրաստութիւնը, մեր կարծիքով, չափազանցութիւն է. բայց այդ պահանջը աչքի առաջ ունենալ դերասաններ հրաւիրելու եւ խմբեր կազմելու ժամանակ շատ նպատակայարմար է: Կան տաղանդաւոր ոյժեր, ընդունակ անձնաւորութիւններ, որոնք յարմարութիւն չեն ունեցել ոչ օրինաւոր մտաւոր կրթութիւն ստանալ եւ ոչ մասնագիտական պատրաստութիւն ձեռք բերել, բայց որոնք կարող են բեմ վարդ լինել: Այդպիսի ոյժերը պէտք է գրաւել դէպի թատրոնը եւ նրանց ամեն կերպ պահպանել ու խրատել: Այդպիսի տաղանդաւոր եւ ընդունակ անձնաւորութիւնները ժամանակի ընթացքում ձեռք են բերում մեծ հմտութիւն եւ բեմական տեխնիկայի վերաբերութեամբ, ունենալով այն առաւելութիւնը, որ նրանք ունեն բնական ձիւք բեմական գործունէութեան համար:

Այդպիսով աննպատակայարմար է եւ սխալ արգելել որոշ յենդ չունեցողներին դերասանութիւն անելու, բայց կարելի է ընտրութիւնների անելու ժամանակ դերասանութիւն տալ այն անձանց, որոնք ունեն յայտնի պատրաստութիւն, մասնաւոր այն դերերի համար, որոնց վերաբերութեամբ պահանջվում են միջին ընդունակութիւններ, բայց անպայման բարձր՝ ինչպէս Գրանշախի դէպքը՝ դերասանական դասակարգը պէտք է աչքի առաջ ունենալ, որ հասարակական կարծիքը նրանցից պահանջում է որոշ կրթութիւն եւ դաստիարակութիւն եւ ցանկանում է, որ այն անձինք, որոնց վերապահված է բեմի վրա ներկայացնել՝ կանքը իր իղէալներով, արժանաւոր մարդիկ լինեն:

Հողեղէններ եւ մէկին երկինք հանեց, մի արն անդունդ դրոցեց՝ իր նաւթահանքերով:

Կին-մարդը, որ նոյն իսկ մօտիկ անցելու է մարդ չէր համարվում, դարձրով ստրկութեան ծանր լուծը տանկուղ յետոյ՝ վերջերս միայն կարողացաւ ցոյց տալ աշխարհին, որ ինքն էլ մարդ է եւ կարող է ազատ, անկախ աշխատանքով, իր երեւի քրտինքով մի կտոր հաց ճարել եւ առանց աղի—արցունքի վաշել այդ հացը:

Բազմաթիւ ասպարէզների վրա նա այսօր փայլում է իր անձնութեամբ եւ ընդունակութեամբ, երբեմն մինչեւ անգամ աւելի, քան շատ ու շատ տղամարդիկ:

Կը գայ, ի հարկէ, ժամանակ, երբ կինը կանգնած կը լինի իր բարձրութեան վրա եւ մենք, տղամարդիկ, ակնածութեամբ կերկրը պագենք ոչ միայն նրա արտաքին գեղեցկութեան, ինչպէս մինչեւ այժմ, այլ առաւել եւս նրա ներքին արժանաւորութիւններին:

Եւ այդ ժամանակը շատ հեռու չէ:

Մենք մտաք XX-դ դարը եւ այդքանը գրեթէ բաւական է:

Ուրիշ նշանաւոր մի բան էլ եմք չը բերել

Նա մեզ համար, բաւական է եւ այն, որ նա ամենայն իրաւունքով կը կոչվի «Եւանանց դար»:

Այսպէս՝ կինը ձգտում է այսօր մեր աչքի առաջ թէ անկախութեան եւ թէ սրա հետ կապված մտաւոր, ֆիզիկական, բարոյական եւ անտեսական առաջադիմութեան:

Օրինակները բաւական են օրից օր, ժամ առ ժամ: Մենք այդ օրինակներից չատենք եւս բերել եւ կը բերենք այսուհետեւ էլ:

Առ այժմ Գրանշախի կին—Заявщикъ-ների մասին:

Պ. Տէր-Աւետիքեան խօսում է նրանց մասին ծագով, աւելին ասենք, մի տեսակ արհամարհանքով: Նա նրանց անուանում է «սիւր պրիք», «չէ գէ օ վր», էգօիստ, մատերիալիստ: Մենք չենք զարմանում, չենք էլ վրդովւում: Մենք լաւ գիտենք առաջին մտածողին, նոր —

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

XXXXI

Մարտի 14-ին Թիֆլիսում մեծաւ իշխան Իվան Իվանովիչ Սվեզնեցով:

Ո՞վ էր Սվեզնեցով, բարձր աստիճանաւոր, յայտնի մի հայրնաւ, սոսիսկ ազնուական Ոչ. դադափարի մարդ էր նա, ուրեմն եւ շատ հազուադէպ տիպ մեր ժամանակներում, երբ դադափարները, ամենալաւ դէպքում, համբարների զոչակների նման ծաղկած, փաթած պահվում են պատկանում եւ դուրս են բերվում միմիայն թաղութների եւ հանգէսներէ ժամանակ: Սվեզնեցով հաւատում էր այն դադափարներին, որ քարոզում էր իր վիպական եւ հրապարակաստական գրաւածքներում, եւ ապրում էր այդ դադափարների համաձայն,— մի բան, որ ինքն ըստ ինքեան, անկախ նոյն իսկ այդ դադափարների էութիւնից, բաւական էր, որ մենք յանգնեցինք ինչինքն նրա անունը:

Բեռնէ մի տեղ առում է, թէ իր հակառակորդները, ամենալաւ դէպքում, գրում են այն, ինչ որ իրանց կարծիքով լաւ է, իսկ ինքը միշտ քարոզում է այն, ինչին հաւատում է: Բեռնէ կարող էր աւելցնել, որ իր կուսակցներից շատերն էլ միմիայն կարծիքներ ունեն եւ ոչ թէ հաւատ: Ինչ վերաբերում է մեր ժամանակներին, առանց չափազանցութեան կարելի է ասել, որ հաւատի մարդկանց ճրագով պէտք է փնտռել, եւ եթէ յանուն դադափարի նիդակներ ջարդողներից հանէք զգրահները, կը տեսնէք, որ կուսակցները նոյնքան հեշտութեամբ կարող են փոխել դադափարները, որքան եւ իրանց զրահներն ու նիդակները:

Այդպէս չէր Սվեզնեցով, եւ այդ էր նրա ամենամեծ արժանաւորութիւնը, այդ էր պատճառը, որ նրան յարգում էին անխտիր ամեն-

սկսողի վիճակը:

Փոխանակ ուրախանալու, փոխանակ ոգեւորելու, աջակցելու, ամենադիւրին բան է ստոցնել, ծաղրել, վատաւանել, յետ կանգնեցնել, որպէս զի ասպարէզը տղամարդին մնայ, այս, միմիայն տղամարդին:

Առաջէք, խնդրեմ, ինչ մի դատապարտելի գործ է, երբ դուք կը տեսնէք մի զարգացած, աշխատասէր օրիորդ կամ կին նաւթահանքը կառավարելիս, գործակաւորներին, մշակներին գլուխ կանգնած՝ բնութեան ծոցից թէ իր, թէ բազմաթիւ չքաւորների համար մի կտոր հաց հանելու:

Ուրախ չէիք լինի, եթէ օրիորդը կամ կինը չնորձը եւ ընդունակութիւն ունենար իր հօր կամ ամուսնու գործարանի դեղը վարելու:

Ուրախ չէիք լինի, եթէ ձեր քոյրը կամ ձեր կինը, երբ դուք, յոգնած, վատաւանած ձեր առօրեայ աշխատանքներից, վերադառնում էք տուն, մի բաժակ թէյ ամէր ձեզ համար, զրուցել ձեզ ձեր գործերի ընթացքի վերաբերմամբ եւ ձեր կողքին նստած՝ զրէր, կանօնաւորէր ձեր գրքերն ու հայեւները:

Այն ժամանակ, կարծում եմ, դուք շատ ուրախ կը լինէիք:

Այսօր իրեւն առաջին սկսող նա ենթարկվում է ձեր ծաղրին ու յարձակումներին:

Հապա փորձէիք այդ մի եւ նոյն լեզուով խօսել, այդ մի եւ նոյն բանը անել մի եւրօպայի աղջկայ կամ կնոջ նկատմամբ, եթէ սա հազարաւոր մղոն ճանապարհ եկած, զղեւնովկա տար եւ փորձէր շահագործել ձեր հարուստ բնութեան մեռած, անուշադրութեան մատնված բազմատեսակ հանքերը:

Դուք այդ չէիք անի, ոչ:

Այն ժամանակ դուք կը շտապէիք չըջապատել նրան, այդ եւրօպայի հիւրին, ամեն տեսակ միջախի ու շարժումներից, կաշառեցէ ձեզանից կախված միջոցներով օգնել, աջակցել նրան, այն պարզ եւ ամենաքիս յայտնի պատճառով, որ այդ նորիկ եւրօպայի կինը իր խելով, իր համարձակ ձեռնարկութեամբ կարողացաւ

զը, թէ նրանք, որոնք դադափարակից էին նրան, թէ նրանք, որոնք տարբեր համոզմունքներ ունէին: Սակայն մենք հայերս մի առանձին պատճառ էլ ունենք յարգելու մատուցանելու Սվեզնեցովի յիշատակին—Սվեզնեցով պատկանում էր ռուս համակրելի նաւթահանի կնիքի թիւին, որոնք ճշմարիտ նաւթահանի կնիքն են հանգիստանում Ռուսաստանում բնակող բոլոր ժողովուրդների շահերին անխտիր: Սվեզնեցովի համար չը կային «ճշմանք» եւ հեթանոսներ, այլ միայն մարդեղբայրներ, որոնցից ոմանք, անկասկած, աւելի մօտ էին նրա օրտին, իրեն իր լեզուով խօսող, իր հոգեբանութիւնն ունեցող մարդիկ, իրեն ռուսներ, բայց որոնցից ոչ մէկը խորթ չէր նրան:

Ռուս էր Սվեզնեցով, այն ռուսներից, որոնց «Всечеловѣкъ» (համաբարդ) էր անուանում Դոստոևսկի եւ որոնք գիրքի են դարձնում ռուս ժողովուրդը այն ամենին, որոնք առիթ են ունենում ճանաչել այդ ժողովուրդը իր հիմնական խաւերում եւ իր բնական պայմաններում, իր կուսական կեանքում:

Նախ քան դրականութեան նուիրվելը դիււրաւան էր եղել հանգուցեալը, որ իր բարձրագոյն ուսումը աւարտել էր գլխաւոր շտաբի Նիկոլայեւսկայա ակադեմիայում: 1873 թ.ին, թողնելով գլխաւորական ծառայութիւնը շտաբական տեսչի աստիճանով, հանգուցեալը բոլորովին անձնատուր էր եղել գրական աշխատանքի, որի բաժանից ծծեց նրա բոլոր քաղցրութիւնը եւ մի եւ նոյն ժամանակ բոլոր դառնութիւնը:

«Իվանովիչ» կեղծանունով Սվեզնեցով տարիների ընթացքում աշխատակցել է ռուս ամենայայտնի եւ ամենահամակրելի հրատարակութիւնների մէջ, ինչպէս «Отечественныя Записки», «Вѣстникъ Европы», «Русская Мысль», «Русскія Вѣдомости» եւ այլն, ու-

րանալ եւ ձեզ համար մի կտոր հացի, մի նոր աշխատանքի դուռը:

Բայց Գրանշախի օրիորդը մերն է. ուստի եւ ամենահեշտ բանն է նրան ծաղրել հրապարակապէս:

Եւ շատ եւս տեսել օրիորդների եւ կանանց վրա խօսող հակառակորդներ, որոնք յետոյ, քիթները կախ արած, հետեւել են նրանց օրինակին, նրանց քայլերին՝ այն եւս աւելի եւ ունեցով:

Դուրս է դալիս, հետեւապէս, եւ սա շատ բնական է, որ մենք յօժարութեամբ ընկալաւում եւ դատապարտում ենք ամեն մի նոր քայլ աւելի շուտ շնորհիւ հային յատուկ նորափախութեան, քան բնական հիմունքների:

Ինչ որ ինձ է վերաբերում, ես ամենայն համակրութեամբ ողջունում եմ հայ օրիորդի կամ կնոջ այդ ուրախաւոր քայլը դէպի անկախ աշխատանքի նոր ասպարէզը եւ ցանկանում եմ կատարելով աջողութիւն:

Գալով բանաստեղծական մրմունջներին, «քառայարկ չըջողներին», «երկրպարտների վոճակին» եւ այլն, սրանք այս դէպքում ոչ այլ ինչ, եթէ ոչ պ. Տէր-Աւետիքեանի յօդուածին արտաքին փայլ տուող գեղեցիկ խօսքեր:

Այդ տեսակ խոնդոտները անգոր են նոր զարթնած հայ կանանց զնացքը կանգնեցնելու կամ խորտակելու: Փչրեցէք, տիկիներ եւ օրիորդներ, այդ խոնդոտները, առաջ անցեք, միայն թէ չըջալայցեցողութեամբ, գիտակցաբար—դէպի ազնիւ, անկախ աշխատանքի անհուն սահմանները: Մրցեցէք տղամարդկանց հետ այդ աշխատանքի ասպարէզում, միայն թէ մի ընդօրինակեցէք այն ձեւերը, որոնք նրանցից շատերի կողմից գործ են դրվում այդ ասպարէզում եւ որոնք միայն կարող են դատապարտելի համարվել «Заявщикъ»-ութեան, թէ մի ուրիշ գործունէութեան մէջ, ով էլ լինի գործողը, կին թէ տղամարդ անխտիր:

Սերմայան

րոնց մէջ նրա վիպական եւ ուրիշ գրեւորները առանձնապէս աչքին չէին ընկնում, որովհետեւ փոքրիկ տաղանդ էր հանգուցեալի տաղանդը եւ զուրկ ինքնուրոյնութիւնից, բայց միտ ներկայացնում էին լաւ մտքեր եւ լաւ զգացմունքներ զարթեցնող ընթերցանութեան նիւթ:

Կովկասի ընթերցողներին հանգուցեալի աշուղտը կամ, աւելի ճիշդ, կեղծանունը—Իվանովիչ—յայտնի դարձաւ այն ժամանակ, երբ նա սկսեց աշխատակցել «НОВОЕ СЛОБОДНОЕ» ակադեմիային, որ առանձին կենդանութեամբ ստացաւ շնորհիւ նրա բազմատեսակ յօդուածներին: Հայ ընթերցողները առանձնապէս կը յիշեն անշուշտ հանգուցեալի վարած եռանդուն բանավորութիւնը Վելիկոյի հետ, բանավոր, որ բնութիւնէն անկեղծ արդարասիրութիւնից, եւ, հաւատարմացած ենք, չը կայ ոչ մի հայ, որ չը ցանկանայ, որ այդ հիւսիսից եկած եւ այստեղ մահ գտած գաղափարի մարդուն թեթեւ, շատ թեթեւ գայ Կովկասի հողը:

S. Յ.

ԱՆՔԵՐՐԻՈՒԹԻՒՆԻՑ ՎՆԱՍՎԱՐՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք հետեւեալ նոր նուիրատուութիւնները. Բագու մի տիկնոջից, որ չէ ցանկանում յայտնել իր անունը, 30 ռուբլի, Թիֆլիս՝ Ս. Խարազեանից 3 ռուբլի, Բաթում՝ Վանեցի Ս. Մինասեանից 1 ռուբլի, Եւալտա՝ մի պարոնից 1 ռուբլի, ընդամենը 35 ռուբլի: Այդ գումարը նախկին 1874 ռուբլի 64 կոպէկի հետ միասին կը կազմէ 1909 ռուբլի 64 կոպէկ:

ՆԱՄԱԿ ԱՆԱՆՑՈՒՄԻՑ

Մարտի 13-ին

Թիֆլիսի կոնստատորիայի հրամանով, կիրակի, մարտի 11-ին, պատարագից յետոյ քաղաքի հոգեւոր կառավարութեան զանգնուած, մեր վիճակի գործակալ Կար. աւագ քահանայ Տէր-Գրիգորեանի հրաւերով եւ նախագահութեամբ կայացաւ բոլոր թաղականների ընդհանուր ժողովը: Ժողովի նպատակն էր. ա) նախկին Կարապետեան ուսումնարանի շինութեան հողաբարձութեան հաշիւները (որը վերջացրել են 1887 թ.) քննել եւ ստուգելու համար ընտրել չորս հաշուետեսներ, եւ բ) կոնստատորիայի որոշումները, քաղաքի եւ ք. Փրկիչ եկեղեցու գումարից 100 կամ 200 ռուբլի ընծայել քաղաքի նոր բացվելիք յանուն Պուշկինի հիւանդանոցին:

Նախագահը, բանալով ժողովը, յայտնեց նպատակը եւ ապա ասեց, որ հոգեւոր կառավարութեան հրամանով երկրորդ հարցը որոշելու համար մասնակցելու են ժողովին մի-միայն ք. Փրկիչ եկեղեցու ծխականները եւ ոչ թէ սովորականի պէս ընդհանրապէս բոլոր ծխականները: Այդ խօսքերը լսելով, ծխականները, գրեթէ միաձայն, բողոքեցին եւ ցանկութեամբ յայտնեցին, որ նախընթաց տարիների պէս բոլոր հարցերը որոշվին բոլոր եկեղեցիների ծխականների մասնակցութեամբ: Նախագահը մերժեց այդ, հիմնվելով կոնստատորիայի հրամանի վրա: Այն ժամանակ ծխականները պահանջեցին կոնստատորիայի հրամանները կարգաւ: Բանից զուրկ եկաւ, որ նախագահի մօտ չը կային այդ հրամանները: Թէ ինչու համար նախագահը այս անգամ չէր վերցրել կոնստատորիայի հրամանները ժողովում կարդալու համար՝ դա միայն մեզ համար անբացատրելի... Ժողովում տեղի ունեցան թեր եւ դէմ խօսակցութիւններ եւ տրուանքներ, վերջը վիճաբանութիւնները այն աստիճանի հասան, որ ծխականներից շատերը թողին ու հեռացան, ուստի ժողովը, ոչ մի որոշում չը կայացնելով, մնաց անհետեւանք եւ յետագայից առաջիկայ կիրակի օրվան:

Ի դէպ պէտք է ասել, որ մեզանում, սկզբից, 1880 թուից, երգումից գաղթած օրից մինչեւ այսօր, բոլոր եկեղեցական հարցերին վերաբերելով ժողովները կայացել են բոլոր եկեղեցիների ծխականների մասնակցութեամբ, առանց ծխաբաժանութեան: Ս. Փրկիչ եկեղեցու կայքերն են գումարներն էլ պատկանում են ոչ թէ միայն նոյն եկեղեցու ծխականներին, այլ, երգումից բերված լինելով, պատկանում են Ախալցխայի ամբողջ հայ ազգաբնակչութեան եւ պէտք է ենթադրվեն նրա իրաւասութեան:

Թէ ինչ հիման վրա կոնստատորիան եւ հոգեւոր կառավարութիւնը այժմ մեղադրում են որ կարգապահութիւններ են անում եւ ծխաբաժանութիւն ու գում մտցնել—այդ բանը մեզ անհասկանալի է: Գուցէ երեւոյթական խառնակութիւնները առիթ տուին այդ բանին... Այդ չը գիտեմ, միայն այս կասեմ, որ այդ բանը մե-

զանում անկարելի է մտնել, գոնէ ք. Փրկիչ եկեղեցու վերաբերմամբ, որովհետեւ, ինչպէս ասացի, նրա բոլոր կառավարների եւ եկամտաւորի իրաւունքը պատկանում է Ախալցխայի ամբողջ ժողովրդին: Կոնստատորիայի այս նոր կարգադրութիւնը, փոխանակ եղած խառնակութիւնը հանգստացնելու, առիթ է տուել աւելի մեծ անբաւականութիւնների եւ գրգռների, շատերը հենց այժմանից թողնում են իրանց եկեղեցին եւ գրվում ք. Փրկիչ եկեղեցու ծխական, որի հետեւանքը լաւ չէ... Ցանկալի է, որ կոնստատորիան գոնէ առ այժմ, քանի որ մեր ժողովուրդը զբաղված է երէցփոխական եւ այլ այդպիսի խառն հարցերով, հրաժարվէ իր այդ կարգադրութիւնը պաշտպանելուց:

Այսպէս, մեզանում այժմ եկեղեցական հարցերի եւ տարածայնութիւնների տագնապ է տիրում: Ամեն տեղ, թէ հասարակական չըլաններում, թէ ժողովատեղերում, ժողովուրդի միակ զբաղմունքը եկեղեցական եւ երէցփոխական հարցերն են: Այս տագնապից ժամանակը մեր նոր յաջորդի, եղիչ վարդապետ Մուրադեանի այստեղ չուտով գալը անհրաժեշտ է ժողովուրդը անհամբեր սպասում է նրա գալուտանքի, յուսալով, որ նա կը կարողանայ հարցերը վճռել չըլանայեցութեամբ եւ անաչառութեամբ:

Միակն

ՆԱՄԱԿ ԱՆԷՔՍԱՆԴՐՈՊՈՒՆԻՑ

Մարտի 12-ին

Քաղաքագլխի ընտրութիւնը մօտ է արդէն, եւ պատրաստութիւններ են տեսնուում իրաւասունների անուանական ցանկը ճիշդ կազմելու: Թէեւ այժմ պատերի կայքած են աշուղտական ցուցակների կայունականից զէնք ունեցող անձանց, բայց, ինչպէս երեւում է, նրանք դեռ իրականորէն եւ ունեն իրանց թերութիւնները, որովհետեւ նրանց մէջ մրցութեամբ են, պետական օրէնքների պահանջի հաւատով, այնպիսի անձանց անուններ, որոնց վրա հաշուած են ապարիկներ եւ որոնք հունեն իրաւունք ընտրող եւ ընտրելի լինելու: Անցնելու արված այդ սխալը հարկաւոր է գէթ այժմ ուղղել եւ տեղի չը տալ թիրիմացութիւնների եւ տարածայնութիւնների:

Իրեւ մէկը Ալեքսանդրօպոլի քաղաքացիներից եւ կառավարականից զէնք ունեցողներից, եւ ինձ իրաւունք եւ պարտականութիւն եմ համարում, առանց թելու աչք բոլորը, որ արել է այժման քաղաքագլխի պ. Գեղամ Տէր-Պետրոսեանը մեր քաղաքի համար, մի-միայն մատնացող անել նրա ցոյց տուած վարչական հմտութիւնը եւ անշահաւէր եռանդը, թէպէտ նա ունի իր անձնական պակասութիւնները, որոնք, սակայն, երբեք գործին չեն խանգարում: Բացի այդ կան մի շարք խնդիրներ, որոնք յարուցված են այժման քաղաքագլխի օրով եւ, դեռ չիրազարծված, թերի են մնում եւ որ ժամանակի ընթացքում ամենից լաւ շարունակել եւ լրացնել կարող է ինքը՝ սկսողը, լաւ ուսումնասիրած եւ նոյն իսկ մշակված լինելով այդ հարցերը: Հաւատացած ենք, որ Ալեքսանդրօպոլի ժողովուրդը բաց մտքով եւ աչքերով կը մօտենայ ընդհանուր գործին, մի կողմ դնելով անձնական շահը: Տողբրիս գրողը այժման քաղաքագլխի պ. Տէր-Պետրոսեանի լոկ անձնաւորութիւնը չը սիրողներից մէկն է, սակայն նրա գործունէութիւնը, անխնայ ջանքը եւ օրինակելի աշխատութիւնը տեսնող եւ դնա հատողներից է:

Ազ. Ման.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ապրիլի 15-ին Մոսկվայում բացվելու են կանանց գիւղատնտեսական կուրսեր, որոնք տեւելու են մինչեւ սեպտեմբերի վերջը:

Հինգշաբթի, մարտի 15-ին, Թիֆլիսի Արտիստական ընկերութեան շէնքում, յօգուտ Թիֆլիսի ուսուցչական ինստիտուտի նոր հիմնվող հանրակրթարանի եւ նախնականութեամբ իշխանուհի Մ. Բէկթարեկեանի, կայացաւ մի հետաքրքրական երեկոյթ, որ իր ներկայութեամբ պատուել էր կառավարապետ իշխան Գոլցիկին: Միջոցների երկու խումբ ներկայացրին Վ. Ի. Նեմիրովիչ—Դանիլեւիչի «Евѣ» փոքրիկ եւ չնորոգ կոմիդիան եւ Տիմկովսկու «Ты-ВЕРНАТА» թոյլ վոդևիլը: Երկու ներկայացումն էլ շուրջ եկան Արտիստական ընկերութեան թատրոն ծայրէ ի ծայր լցած հասարակութեան, որ վարձատրեց սիրողներին բուռն ծափահարութիւններով: Ներկայացումից յետոյ կայացաւ կոնցերտային բաժանմունքը, մասնակցութեամբ

օր. Պապայանի, դաշնակահար Լեվին ամուսինների եւ երիտասարդ պ. Ա. Չմէկեանի, որ զէկադէստական ճաշակի մի նմուշ տուեց «АДОНИС» մէլօդէկլամայիցով, զէկլամայիս անհնար զաւնամուրի նուագակցութեամբ, այսինքն իր համար աննպաստ պայմաններում, որովհետեւ երաժշտական գործիքների հետ ձայնը կարող է մրցել միայն մի դէպքում,—երբ նա երգում է եւ երբ նա հրաշալի ձայն է: Ինչ վերաբերում է կոնցերտային բաժանմունքը միւս մասնակցողներին, Լեվին ամուսինները արժեք ունեցան բուռն ծափահարութիւնների եւ ստիպված եղան նուագել երկրորդ անգամ, իսկ օր. Պապայանին, ինչպէս միշտ, հասարակութիւնը ընդունեց հաւանութեան ոգեւորված ցոյցերով, ստիպելով երգել մի քանի անգամ աւելի, քան նշանակված էր ծրագրում: Վերջում Արտիստական ընկերութեան զանիճում տեղի ունեցան պարեր: Երեկոյթի ժամանակ շատերը ստորագրվում էին մի ուրիշի, որ մատուցվելու է օր. Պապայանին, որ, ինչպէս յայտնի է, հրաւիրված է երգելու Պետերբուրգի Կայսերական օպերայում: Տաղանդաւոր երգչուհու յա գոգնելի թիւը չէ սահմանափակվում, ի հարկէ, նրանցով, որոնք ստորագրվում են ուղերձին. օր. Պապայան տանում է իր հետ, բառի բուռն նշանակութեամբ, ամբողջ Թիֆլիսի համակրութիւնը:

«Харск» լրագրում կարգում ենք. «Կարսի չըլանի զինուորական նահանգապետ Սամոյլով առաջարկեց Կարսի ոստիկանապետ իշխան Խերխուրիճէին նորից քննել Կարսում քաղաքային ինքնավարութիւն մտցնելու հարցը եւ ներկայացնել իրան գեկուցումն այդ անսխալ Կարսի քաղաքային ոստիկանական վարչութեան ընդհանուր ատենքը, մօտ օրերումս քննելով այդ հարցը, վճռեց խնդրել պ. նահանգապետին, որ նա միջնորդէ Կովկասի պ. Կառավարապետի առաջ՝ մտցնելու Կարսում 1902 թ. ամսակից քաղաքային ինքնավարութիւն՝ իր ամբողջական ձեւով եւ առանց որ եւ է փոփոխութեան, որպէս մտքած է Անդրկովկասի ուրիշ նահանգական քաղաքներում:

«Приаз. Край» լրագրում կարգում ենք. «Վերջերս ուսուցչ կառավարութեան թոյլ-ուտ թեմաթ Թերեքի չըլանից Թերեքի քաղութիցին մի քանի տեղացի ընտանիքներ: Հիմք կայ ենթադրելու, որ Թերեքի քաղութիւնը հոսանքը այդ մի քանի ընտանիքներով չի սահմանափակվել: Թերեքի մի տեսակ աւետեաց երկրի է թոււմ քաղթականներին: Մինչեւ անգամ Թերեքիս եղած ժողովանց նկարագրութիւնները չեն կանգնեցնում նրանց: Գաղթականները ճանձների պէս մեռնում են այնտեղ, բոլորը սարսափելի աղքատացել են, տեղական բուն աղքատները թշնամաբար է վերաբերվում նրանց, տեսնելու անպէս այդ ծանր դրութեանից զուրկ գալու բոլոր ջանքերը ի դերեւ են անցնում ընդհանուր անկուրաբանականութեան պատճառով եւ այն: Ոչինչ չէ վախեցնում նրանց: Մի կողմից նրանք կարգութեամբ են դնում են նրանք հեռու օտար երկրներ, կրկնով շատ տանջանքներ եւ աշխատանք թէ ճանապարհի վրա եւ թէ հենց աւետեաց երկրի մէջ: Արդէն վերադարձ չը կայ: Շատ ցանկալի կը լինէր բացատրել քաղթականներից, թէ ինչպիսի գրկանքներ է նրանց սպասում սովորաբար Թերեքիայում:

«Россиа» լրագրին հետագրում են Կիեվից, թէ Կիեվի գեներալ-նահանգապետը հրատարակել է լրագիրներում, որ արգելվում է փողոցներում ցոյցեր անել, հաւաքվել միատեղ հրապարակներում, ճանկիքներում եւ երկաթուղային կայարաններում: Գեներալ-նահանգապետը նախազգուշացնում է, որ վերոյիշեալ կարգադրութեան խախտման դէպքում անհազանքները պէտք է անպայման ենթարկվեն տեղական ոստիկանութեան պահանջներին, եւ թէ ոչ չորքեր կը կանչվեն:

Հաղորդակցութեան ճանապարհներին միխտարութիւնը 90 հազար ռուբլի է նշանակել մի թանգարանի շինութեան համար, որ պէտք է կրէ Ռուսաստանում երկաթուղային գծերի առաջին հիմնադիր Նիկոլայ I Կայսրի անունը:

Մարտի 14-ին մեռած սուս գրող Իվան Իվանովիչ Սվեդոմոյի (Իվանովիչ) թաղումը տեղի կունենայ այսօր: Հանգուցեալի մարմինը

այսօր, չարաթ, ժամի 10-ին, դուրս կը բերեն իր բնակարանից (Ալեքսանդրեան փողոց, տ. Բուսոյի, № 68) եւ կը տանեն ուսաց Կուկիայի դերեզմանատունը:

Յիւսանների միխտարութիւնը կարճ ժամանակից յետոյ կը ներկայացնէ պետական խորհրդին մի օրինագիծ, որով ենթադրվում է գործարաններում ամեն տեղ բանալ պրօֆէսիօնալ ուսումնարաններ, որտեղ աշակերտները սովորէին որոշ մասնագիտութիւններ, Գերմանիայում գոյութիւն ունեցող գործարանական ուսումնարաններին նմանութեամբ:

Մոսկվայից հաղորդում են լրագիրներին, թէ արձաթէ 25 կոպէկանոցները գործածութիւնից հանված են այժմ, որովհետեւ փող կեղծողները շատ հեշտ են կարողանում արձաթէ 25 կոպէկանոցը, օսկեզօծելով, 10 ռուբլիանոց դարձնել:

Երեւանից մեզ գրում են. «Մարտի 9-ին, Երեւանի նահանգական դատարանի քաղաքացիական բաժնում նշանակված էր Կարսի եկեղեցական կայուածքի գործի քննութիւնը: 1896 թ. ին, Կարսում, յաջորդ եղիչ Մուրադեանի ջանքերով քաղաքի կենտրոնում գնվում է մի մեծ գետին եւ նրա վրա կառուցվում են մի շարք շինութիւններ յաջորդարանի եւ հոգեւոր կառավարութեան համար, 3,500 ռ. վարձ բերող մօտ 18 խանութներ ու մի փողոցի եկեղեցի: Մօտ 1200 քառակուսի ասֆէն տարածութեան վրա ընկած այդ գեղեցիկ շինութիւնները 1898 թ. ի սեպտեմբերի 5-ին ցուցակագրվեցին ժողովրդական դպրոցների տեսչի կողմից, որպէս ուսումնարանների շէնքեր: Անա այդ բանի դէմ բողոքեց Մուրադեան վարդապետը: Հոգեւոր կառավարութեան շահերը պաշտպանում էր սինօդի փաստաբան պ. Ռ. Ջալալեանը: Դատարանը մարտի 13-ին արձակեց իր վճիռը, մերժելով հոգեւոր կառավարութեան պահանջները: Գործը, փաստաբանի պահանջով, անցնելու է դատաւանական պալատը:

Անկախ Անկախ մեզ գրում են. «Երկրաշարժի շնորհիւ շարունակվում են փոքրիկ ցնդուումներ տեղի ունեցան մարտի 10-ին, առաւօտեան ժամը 7-ին, եւ 14-ին, առաւօտեան ժամը 4-ին: Շատերն ասում են, որ 11-ին եւ 12-ին էլ տեղի են ունեցել փոքրիկ, հազիւ նկատելի տատանումներ: Ցանկալի է, որ այստեղ չուտով հիմնարկի ենթադրվող սէյսմիքական (երկրաշարժական) կայարանը, որ կարելի լինի կանոնաւոր դիտողութիւններ անել:

Անկախ Անկախ մեզ գրում են. «Քաղաքի նախկին յաջորդ Կիրիլ վարդապետ Կիրիլեանը անցեալ կիրակի, մարտի 4-ին, առաւօտեան, եկեղեցում իր հրաժեշտի ողջոյնը տալով, ուղեւորվեց դէպի Կարս իր նոր պաշտօնատեղին: Հայր Կիրիլեանին ճանապարհ գրին այստեղի հոգեւորականութիւնը եւ հոգեւոր կառավարութեան անհրաժեշտ ժողովրդից ոչ ոք չէր եկել: Նոր յաջորդը դեռ չէ եկել:

ՆՈՐ-ՆԱՄԻՋԻԱՆԻՑ մեզ գրում են. «Սանրէմի մէջ կիւրեց իր մահկանացուն երիտասարդ Կ. Մեղրեանն եղել կան, մեր նախկին քաղաքագլխի Ռուսան օրոշեց պատկ դնել նրա գաղաղի վրա, մի պատկ, որ մի եւ նոյն օրը պիտի թաղամի: Ե՛րբ փոխանակ հարիւրներ, հազարներ վառնելու պատկերի համար՝ մի բարի գործ պիտի կատարենք:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Ուրմի, մարտի 4-ին

Այս քանի օրերը մենք ականատես եղանք մի կարգ պարսկական դատավարութիւնների, այսպէս ասած, հնադարեան սոսկալի պատիժների: Պարսկաստանում ոչ մի յանցանք արագ քննարկվում, որպէս մարդասպանը եւ գողը: Անցանքները մի ձի գողանալու համար երկու մարդու թեւերը կտրեցին, մի ուրիշ թեւերը ոտը կտրեցին մի պղնձէ ասանի գողանալու համար: Թէ որքան անտանելի կը լինի այդ դժբաղդ յանցանքներից ցուրտը, դա երեւակային անգամ սարսափելի է, երբ կտրված թեւից արիւնք փշփշալով հոսում է եւ այլ եւս հնար չէ լինում հոսման առաջն առնել: Կ:

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванская ул., № 27